Երկրորդ ընթերցում
(Լրամշակված նախագիծ)

Կ-965-20.11.2024,19.03.2025-ԱՌՀ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Օ Ր Ե Ն Ք Ը

«ԱՆՁԻ ՖՈՒՆԿՑԻՈՆԱԼՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Անձի ֆունկցիոնալության գնահատման մասին» 2021 թվականի մայիսի 5-ի ՀՕ-195-Ն օրենքը (այսուհետ՝ Օրենք) 1-ին հոդվածի 1-ին մասում «ինչպես նաև կարգավորում է» բառերից հետո լրացնել «ֆունկցիոնալության գնահատման նկատմամբ վերահսկողությունը և» բառերը:

Հոդված 2. Օրենքի 3-րդ հոդվածում՝

1) 1-ին մասի 6-րդ կետում «:» կետադրական նշանը փոխարինել «.» կետադրական նշանով,

2) 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 7-րդ, 8-րդ, 9-րդ, 10-րդ և 11-րդ կետերով՝

«7) **ուղեգրում**՝ անհրաժեշտ կլինիկական տվյալների, լաբորատոր-գործիքային ախտորոշիչ հետազոտությունների արդյունքների հիման վրա բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպության կողմից անձի ֆունկցիոնալության գնահատման ենթակա լինելու հավաստում, որի արդյունքում տրվում է ուղեգիր.

8) **ամփոփագիր**՝ ներկայացված բժշկական փաստաթղթերի, Կառավարության որոշմամբ սահմանված ինքնագնահատման հարցաշարի և այլ տեղեկատվության հիման վրա մշակված անձի ֆունկցիոնալության նկարագիր.

9) **դիտարկում**՝ տեսչական մարմնի կողմից անձի ֆունկցիոնալության գնահատման օրենսդրությամբ սահմանված պահանջների խախտումների կանխարգելման և բացահայտման նպատակով իրականացվող գործողությունների ամբողջություն.

10) **դիտարկվող սուբյեկտ**՝ անձի ֆունկցիոնալության գնահատմանը ներգրավված անձի ֆունկցիոնալության գնահատման ոլորտում Կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի, Միասնական սոցիալական ծառայության (այսուհետ՝ անձի ֆունկցիոնալության գնահատման ոլորտում իրավասու պետական մարմին) աշխատակիցներ, այդ թվում՝ ֆունկցիոնալության գնահատման հանձնաժողով կամ հանձնաժողովի անդամ, բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություն.

11) **դիտարկվող օբյեկտ**՝ կոնկրետ անձի կապակցությամբ իրականացված ֆունկցիոնալության գնահատում»:

Հոդված 3. Օրենքի 6-րդ հոդվածում՝

1) 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 4.1-ին կետով՝ «4.1) ապահովում է անձի ֆունկցիոնալության գնահատման հանձնաժողովի անդամի վերապատրաստման իրականացումը և հավաստագրի տրամադրումը.».

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ 2-րդ մասով՝

«2. Լիազոր մարմինն անձի ֆունկցիոնալությունը գնահատող հանձնաժողովների գործունեության մշտադիտարկումների արդյունքները կարող է օգտագործել միայն անձի ֆունկցիոնալության գնահատման ոլորտում քաղաքականության իրականացման գնահատման համար:»:

Հոդված 4. Օրենքի 7-րդ հոդվածում 5-րդ մասի 2-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2) լիազոր մարմնի և անձի ֆունկցիոնալության գնահատման ոլորտում իրավասու պետական մարմնի նախաձեռնության, այդ թվում՝ տեսչական մարմնի կողմից ներկայացված միջնորդագրի հիման վրա (վարչական ակտի իրավաչափությունը գնահատելու համար).»:

Հոդված 5. Օրենքի 7-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 5.1-րդ և 5.2-րդ մասերով.

«5.1. Անձին ֆունկցիոնալության գնահատման, բացառությամբ մահվան պատճառական կապը որոշելու դեպքի, ուղեգրում է բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպությունը օրենսդրությամբ սահմանած կարգով:

5.2. Անձի ֆունկցիոնալության գնահատման դիմումին և անձի ֆունկցիոնալության գնահատման ուղեգրին ներկայացվող պահանջների ստուգումն ու ամփոփագրի մշակումն

իրականացնում է անձի ֆունկցիոնալության գնահատման ոլորտում իրավասու պետական մարմինը:»:

Հոդված 6. Օրենքի 11-րդ հոդվածում՝

1) վերնագրից հանել «և վերահսկողությունը» բառերը,

2) 2-րդ մասը ուժ կորցրած ճանաչել:

Հոդված 7. Օրենքի 2-րդ գլուխը լրացնել հետևյալ բովանդակությամբ 11.1-րդ հոդվածով.

«Հոդված 11.1. Անձի ֆունկցիոնալության գնահատման նկատմամբ վերահսկողության իրականացումը

1. Անձի ֆունկցիոնալության գնահատման նկատմամբ վերահսկողությունն իրականացվում է առողջապահության ոլորտում վերահսկողություն իրականացնող տեսչական մարմինը դիտարկումների միջոցով:

2. Դիտարկումն իրականացվում է Կառավարության հաստատած դիտարկման ստուգաթերթով, որը մշակվում է «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» օրենքով ստուգաթերթի մշակման համար սահմանված կարգով:

3. Դիտարկումները լինում են դիտարկումների տարեկան ծրագրով նախատեսված և ըստ անհրաժեշտության:

4. Դիտարկումների տարեկան ծրագրով նախատեսված դիտարկումներ իրականացվում են տեսչական մարմնի ղեկավարի հաստատած դիտարկման տարեկան ծրագրին (այսուհետև՝ ծրագիր) համապատասխան, որը կազմվում է Կառավարության որոշմամբ հաստատած մեթոդաբանության հիման վրա:

5. Ծրագրում նշվում է դիտարկվող սուբյեկտի անվանումը և դիտարկման իրականացման ժամանակահատվածը: Ծրագրով նախատեսված դիտարկումները կարող են իրականացվել տարվա ընթացքում մեկ անգամ:

6. Ըստ անհրաժեշտության դիտարկումներ իրականացնելու հիմք են՝

1) պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների հաղորդումները.

2) ֆիզիկական անձի կամ նրա օրինական ներկայացուցչի (օրենսդրությամբ ֆունկցիոնալության գնահատման դիմում ներկայացնելու իրավունքի ունեցող անձի) դիմումը, որի ֆունկցիոնալությունը գնահատվել է.

3) հաշմանդամություն ունեցող անձանց հիմնահարցերով զբաղվող կազմակերպությունների հաղորդումները.

4) Հայաստանի Հանրապետության վարչապետի հանձնարարականը:

7. Դիտարկումն իրականացվում է տեսչական մարմնի ղեկավարի հրամանի հիման վրա, որում նշվում են դիտարկում իրականացնող մարմնի անվանումը, դիտարկում իրականացնող անձի պաշտոնը, անունը, ազգանունը, դիտարկման օբյեկտի վերաբերյալ տեղեկություններ, դիտարկվող սուբյեկտի վերաբերյալ տեղեկություններ (եթե դիտարկման հրամանը կազմելու պահին դիտարկվող սուբյեկտները հայտնի են), դիտարկման նպատակը, ստուգաթերթով նախատեսված այն հարցերի շրջանակը, որոնք անհրաժեշտ է պարզել տվյալ դիտարկման ընթացքում, դիտարկման իրավական հիմքերը, սույն հոդվածի 6-րդ մասով նախատեսված դեպքերում՝ նաև դիտարկումն անցկացնելու անհրաժեշտությունը հիմնավորող հանգամանքները:

8. Դիտարկումն իրականացնելու մասին հրամանի օրինակը դիտարկումը սկսելուց առնվազն երեք օր առաջ ծանուցվում է անձի ֆունկցիոնալության գնահատման ոլորտում իրավասու պետական մարմին, ինչպես նաև դիտարկվող սուբյեկտին:

9. Դիտարկման վարույթի տևողությունը երեսուն օր է:

10. Դիտարկում իրականացնող անձինք իրավունք ունեն դիտարկվող սուբյեկտից պահանջելու տվյալներ և այլ տեղեկություններ, բացատրություններ, տեղեկանքներ, որոնք անմիջականորեն առնչվում են իրենց իրավասության շրջանակներում իրականացվող դիտարկման նպատակներին, վերցնել իրեր և այլ անհրաժեշտ նյութեր, որոնք անմիջականորեն առնչվում են դիտարկման նպատակներին: Փաստաթղթերը վերցնելիս դիտարկում իրականացնող պաշտոնատար անձինք կնիքով կնքում են դրանց կրկնօրինակները և հանձնում դիտարկվող սուբյեկտին (ներկայացուցիչներին):

11. Դիտարկումից հետո կազմվում է արձանագրություն, որում նշվում են՝

1) արձանագրությունը կազմելու տարին, ամիսը, ամսաթիվը և վայրը.

2) դիտարկում իրականացնող պետական մարմնի անվանումը.

3) դիտարկում նշանակելու մասին հրամանի ամսաթիվն ու համարը.

4) դիտարկում իրականացնող պաշտոնատար անձի պաշտոնը, անունը, ազգանունը.

5) դիտարկվող օբյեկտի վերաբերյալ տեղեկություններ.

6) դիտարկվող սուբյեկտի անունը, ազգանունը.

7) դիտարկում անցկացնելու ամսաթիվը և վայրը.

8) դիտարկման ստուգաթերթի անվանումը, ընդունման ամսաթիվը, հերթական համարը, որում ընդգրկված հարցերի շրջանակներում իրականացվել է դիտարկումը, ինչպես նաև ստուգաթերթի այն հարցերը, որոնց պատասխանները հիմք են հանդիսացել խախտումն արձանագրելու համար.

9) դիտարկմամբ բացահայտված խախտումները, խախտումների նկարագրությունը, և այն իրավական նորմերը, որոնց պահանջները չեն կատարվել կա, պահպանվել.

10) պատասխանատվության կիրառման համապատասխան իրավական հիմքերը.

11) դիտարկվող սուբյեկտի ներկայացրած առարկությունների վերաբերյալ նշումները:

12. Դիտարկման ընթացքում անձի ֆունկցիոնալության գնահատման օրենսդրությամբ սահմանված պահանջների խախտում հայտնաբերելու դեպքում տեսչական մարմնի ղեկավարը կամ նրա հանձնարարությամբ՝ դիտարկում իրականացնող պաշտոնատար անձը՝ ելնելով խախտման բնույթից.

1) միջնորդագիր է ներկայացնում լիազոր մարմին և անձի ֆունկցիոնալության գնահատման ոլորտում իրավասու պետական մարմին անձի ֆունկցիոնալության գնահատման վերաբերյալ վարչական ակտը վերանայելու վերաբերյալ.

2) միջնորդագիր է ներկայացնում լիազոր մարմին անձի ֆունկցիոնալության գնահատման գործընթացում ներգրավված մասնագետին հավաստագրից զրկելու վերաբերյալ, եթե մասնագետը ֆունկցիոնալության գնահատման առնվազն երեք վարույթով թույլ է տվել խախտում.

3) միջնորդագիր է ներկայացնում առողջապահության բնագավառի պետական կառավարման լիազոր մարմին՝ անձին ֆունկցիոնալության գնահատման ուղեգրում իրականացրած բուժաշխատողի անհատական լիցենզիայի գործողությունը կասեցնելու վերաբերյալ՝ եթե բուժաշխատողը մեկ տարվա ընթացքում ուղեգրման առնվազն երեք դեպքով թույլ է տվել խախտում:

13. Սույն հոդվածի 12-րդ մասի 1-ին կետով սահմանված միջնորդագիրը հիմք է ֆունկցիոնալության գնահատման վերաբերյալ որոշման իրավաչափությունը գնահատելու և վարչական վարութ հարուցելու համար, որի արդյունքով անձի ֆունկցիոնալության

գնահատման ոլորտում իրավասու մարմինը կարող է ընդունել վարչական ակտն անփոփոխ թողնելու, փոփոխելու կամ անվավեր ճանաչելու վերաբերյալ որոշում:

14. Սույն հոդվածի 13-րդ մասով սահմանված, ինչպես նաև դիտարկման վարույթի նկատմամբ կիրառվում են վարչական վարույթի վերաբերյալ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքով սահմանված դրույթները՝ սույն հոդվածով սահմանված առանձնահատկությունների հաշվառմամբ:

15. Սույն հոդվածի 12-րդ մասի 2-րդ կետով սահմանված միջնորդագրի հիման վրա լիազոր մարմինն ընդունում է անձի ֆունկցիոնալության գնահատման գործընթացում ներգրավված մասնագետին հավաստագրից զրկելու մասին որոշում:

16. Սույն հոդվածի 12-րդ մասի 3-րդ կետով սահմանված միջնորդագրի հիման վրա Հայաստանի Հանրապետության առողջապահության բնագավառի պետական կառավարման լիազոր մարմինը կարող է երեք ամիս ժամկետով կասեցնել բուժաշխատողի անհատական լիցենզիայի գործողությունը:

17. Անձի ֆունկցիոնալության գնահատման գործընթացում ներգրավված մասնագետին հավաստագրից զրկելու մասին որոշումն ուժի մեջ մտնելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում, անձին անձի ֆունկցիոնալություն գնահատող մասնագետի որակավորման հավաստագիր չի կարող տրամադրվել:

18. Լիազոր մարմինը, անձի ֆունկցիոնալության գնահատման ոլորտում իրավասու պետական մարմինը և առողջապահության բնագավառի պետական կառավարման լիազոր մարմինը սույն հոդվածի 12-րդ մասով նշված միջնորդագրի քննության արդյունքների վերաբերյալ տեղեկությունները պատշաճ ձևով ծանուցում է տեսչական մարմնին՝ համապատասխան վարչական վարույթի ավարտից հետո՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

19. Դիտարկման ընթացքում անձի ֆունկցիոնալության գնահատման օրենսդրությամբ սահմանված պահանջների խախտումների համար կիրառվում են օրենքով սահմանված պատասխանատվության միջոցներ:

20. Սույն հոդվածի 6-րդ մասի 1-ին կետով նախատեսված հիմքով իրականացրած դիտարկման վարույթի ավարտից հետո՝ տեսչական մարմինը 3-օրյա ժամկետում հաղորդում ներկայացրած պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններին պատշաճ ձևով ծանուցում է միայն դիտարկման արդյունքների վերաբերյալ՝

բացառելով բժշկական գաղտնիք կամ անձնական տվյալ համարվող տեղեկությունների տրամադրումը:»:

Հոդված 8. Օրենքի 12-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 13-րդ մասով.

13. Տեսչական մարմնին տրվում է հասանելիություն տեղեկատվական շտեմարանին այն ծավալով, որն անհրաժեշտ է սույն օրենքով սահմանված վերահսկողական գործառույթներն իրականացնելու համար:»

Հոդված 9.

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված կարգավորումների:

2. Սույն օրենքից բխող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերն ընդունվում են սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ վեցամսյա ժամկետում:

3. Սույն օրենքի 7-րդ հոդվածով լրացվող Օրենքի 11.1-ին հոդվածի 12-րդ մասի 3-րդ կետն անհատական լիցենզիայի մասով՝ 2027 թվականի հունվարի 1-ից:

ՏԵՂԵԿԱՆՔ

ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

«ԱՆՁԻ ՖՈՒՆԿՑԻՈՆԱԼՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Անձի ֆունկցիոնալության գնահատման մասին» 2021 թվականի մայիսի 5-ի ՀՕ-195-Ն օրենքը (այսուհետ՝ Օրենք) 1-ին հոդվածի 1-ին մասում «ինչպես նաև կարգավորում է» բառերից հետո լրացնել «ֆունկցիոնալության գնահատման նկատմամբ վերահսկողությունը և» բառերը:

Հոդված 2. Օրենքի 3-րդ հոդվածում՝

1) 1-ին մասի 6-րդ կետում «:» կետադրական նշանը փոխարինել «.» կետադրական նշանով,

2) 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 7-րդ, 8-րդ, 9-րդ, 10-րդ և 11-րդ կետերով՝

«7) **ուղեգրում՝** անհրաժեշտ կլինիկական տվյալների, լաբորատոր-գործիքային ախտորոշիչ հետազոտությունների արդյունքների հիման վրա բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպության կողմից անձի ֆունկցիոնալության գնահատման ենթակա լինելու հավաստում, որի արդյունքում տրվում է ուղեգիր.

8) **ամփոփագիր՝** ներկայացված բժշկական փաստաթղթերի, Կառավարության որոշմամբ սահմանված ինքնագնահատման հարցաշարի և այլ տեղեկատվության հիման վրա մշակված անձի ֆունկցիոնալության նկարագիր.

9) **դիտարկում՝** տեսչական մարմնի կողմից անձի ֆունկցիոնալության գնահատման օրենսդրությամբ սահմանված պահանջների խախտումների կանխարգելման և բացահայտման նպատակով իրականացվող գործողությունների ամբողջություն.

10) **դիտարկվող սուբյեկտ**՝ անձի ֆունկցիոնալության գնահատմանը ներգրավված անձի ֆունկցիոնալության գնահատման ոլորտում Կառավարության լիազորած պետական կառավարման ~~լիազոր~~ մարմնի, Միասնական սոցիալական ծառայության (այսուհետ՝ անձի ֆունկցիոնալության գնահատման ոլորտում իրավասու պետական մարմին) աշխատակիցներ, այդ թվում՝ ֆունկցիոնալության գնահատման հանձնաժողով կամ հանձնաժողովի անդամ, բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություն.

11) **դիտարկվող օբյեկտ**՝ կոնկրետ անձի կապակցությամբ իրականացված ֆունկցիոնալության գնահատում»:

Հոդված 3. Օրենքի 6-րդ հոդվածում՝

1) 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 4.1-ին կետով՝ «4.1) ապահովում է անձի ֆունկցիոնալության գնահատման հանձնաժողովի անդամի վերապատրաստման իրականացումը և հավաստագրի տրամադրումը.».

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ 2-րդ մասով՝

«2. Լիազոր մարմինն անձի ֆունկցիոնալությունը գնահատող հանձնաժողովների գործունեության մշտադիտարկումների արդյունքները կարող է օգտագործել միայն անձի ֆունկցիոնալության գնահատման ոլորտում քաղաքականության իրականացման գնահատման համար:»:

Հոդված 4. Օրենքի 7-րդ հոդվածում 5-րդ մասի 2-րդ ~~կետում «նախաձեռնության» բառից հետո լրացնել «, այդ թվում՝ տեսչական մարմնի կողմից ներկայացված միջնորդագրի» բառերը:~~ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

2) լիազոր մարմնի և անձի ֆունկցիոնալության գնահատման ոլորտում իրավասու պետական մարմնի նախաձեռնության, այդ թվում՝ տեսչական մարմնի կողմից ներկայացված միջնորդագրի հիման վրա (վարչական ակտի իրավաչափությունը գնահատելու համար).

Հոդված 5. Օրենքի 7-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 5.1-րդ և 5.2-րդ մասերով.

«5.1. Անձին ֆունկցիոնալության գնահատման, բացառությամբ մահվան պատճառական կապը որոշելու դեպքի, ուղեգրում է բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպությունը օրենսդրությամբ սահմանած կարգով:

5.2. Անձի ֆունկցիոնալության գնահատման ~~դիմումը մուտքագրվում է էլեկտրոնային համակարգ անձի կամ նրա օրինական ներկայացուցչի կողմից, իսկ~~ դիմումին և անձի ֆունկցիոնալության գնահատման ուղեգրին ներկայացվող պահանջների ստուգումն ու ամփոփագրի մշակումն իրականացնում է անձի ֆունկցիոնալության գնահատման ոլորտում իրավասու պետական մարմինը:»:

Հոդված 6. Օրենքի 11-րդ հոդվածում՝

1) վերնագրից հանել «և վերահսկողությունը» բառերը,
2) 2-րդ մասը ուժ կորցրած ճանաչել:

Հոդված 7. Օրենքի 2-րդ գլուխը լրացնել հետևյալ բովանդակությամբ 11.1-րդ հոդվածով.

«Հոդված 11.1. Անձի ֆունկցիոնալության գնահատման նկատմամբ վերահսկողության իրականացումը

1. Անձի ֆունկցիոնալության գնահատման նկատմամբ վերահսկողությունն իրականացվում է առողջապահության ոլորտում վերահսկողություն իրականացնող տեսչական մարմինը դիտարկումների միջոցով:

2. Դիտարկումն իրականացվում է Կառավարության հաստատած դիտարկման ստուգաթերթով, որը մշակվում է «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» օրենքով ստուգաթերթի մշակման համար սահմանված կարգով:

3. Դիտարկումները լինում են դիտարկումների տարեկան ծրագրով նախատեսված և ըստ անհրաժեշտության:

4. Դիտարկումների տարեկան ծրագրով նախատեսված դիտարկումներ իրականացվում են տեսչական մարմնի ղեկավարի հաստատած դիտարկման տարեկան ծրագրին (այսուհետև՝ ծրագիր) համապատասխան, որը կազմվում է Կառավարության որոշմամբ հաստատած մեթոդաբանության հիման վրա:

5. Ծրագրում նշվում է դիտարկվող սուբյեկտի անվանումը և դիտարկման իրականացման ժամանակահատվածը: Ծրագրով նախատեսված դիտարկումները կարող են իրականացվել տարվա ընթացքում մեկ անգամ:

6. Ըստ անհրաժեշտության դիտարկումներ իրականացնելու հիմք են՝

1) պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների հաղորդումները.

2) ֆիզիկական անձի կամ նրա օրինական ներկայացուցչի (օրենսդրությամբ ֆունկցիոնալության գնահատման դիմում ներկայացնելու իրավունքի ունեցող անձի) դիմումը, որի ֆունկցիոնալությունը գնահատվել է.

3) հաշմանդամություն ունեցող անձանց հիմնահարցերով զբաղվող կազմակերպությունների հաղորդումները.

4) Հայաստանի Հանրապետության վարչապետի հանձնարարականը:

7. Դիտարկումն իրականացվում է տեսչական մարմնի ղեկավարի հրամանի հիման վրա, որում նշվում են դիտարկում իրականացնող մարմնի անվանումը, դիտարկում իրականացնող անձի պաշտոնը, անունը, ազգանունը, դիտարկման օբյեկտի վերաբերյալ տեղեկություններ, դիտարկվող սուբյեկտի վերաբերյալ տեղեկություններ (եթե դիտարկման հրամանը կազմելու պահին դիտարկվող սուբյեկտները հայտնի են), դիտարկման նպատակը, ստուգաթերթով նախատեսված այն հարցերի շրջանակը, որոնք անհրաժեշտ է պարզել տվյալ դիտարկման ընթացքում, դիտարկման իրավական հիմքերը, սույն հոդվածի 6-րդ մասով նախատեսված դեպքերում՝ նաև դիտարկումն անցկացնելու անհրաժեշտությունը հիմնավորող հանգամանքները:

8. Դիտարկումն իրականացնելու մասին հրամանի օրինակը դիտարկումը սկսելուց առնվազն երեք օր առաջ ծանուցվում է անձի ֆունկցիոնալության գնահատման ոլորտում իրավասու պետական մարմին, ինչպես նաև դիտարկվող սուբյեկտին:

9. Դիտարկման վարույթի տևողությունը երեսուն օր է:

10. Դիտարկում իրականացնող անձինք իրավունք ունեն դիտարկվող սուբյեկտից պահանջելու տվյալներ և այլ տեղեկություններ, բացատրություններ, տեղեկանքներ, որոնք անմիջականորեն առնչվում են իրենց իրավասության շրջանակներում իրականացվող դիտարկման նպատակներին, վերցնել իրեր և այլ անհրաժեշտ նյութեր, որոնք անմիջականորեն առնչվում են դիտարկման նպատակներին: Փաստաթղթերը վերցնելիս

դիտարկում իրականացնող պաշտոնատար անձինք կնիքով կնքում են դրանց կրկնօրինակները և հանձնում դիտարկվող սուբյեկտին (ներկայացուցիչներին):

11. Դիտարկումից հետո կազմվում է արձանագրություն, որում նշվում են՝

1) արձանագրությունը կազմելու տարին, ամիսը, ամսաթիվը և վայրը.

2) դիտարկում իրականացնող պետական մարմնի անվանումը.

3) դիտարկում նշանակելու մասին հրամանի ամսաթիվն ու համարը.

4) դիտարկում իրականացնող պաշտոնատար անձի պաշտոնը, անունը, ազգանունը.

5) դիտարկվող օբյեկտի վերաբերյալ տեղեկություններ.

6) դիտարկվող սուբյեկտի անունը, ազգանունը.

7) դիտարկում անցկացնելու ամսաթիվը և վայրը.

8) դիտարկման ստուգաթերթի անվանումը, ընդունման ամսաթիվը, հերթական համարը, որում ընդգրկված հարցերի շրջանակներում իրականացվել է դիտարկումը, ինչպես նաև ստուգաթերթի այն հարցերը, որոնց պատասխանները հիմք են հանդիսացել խախտումն արձանագրելու համար.

9) դիտարկմամբ բացահայտված խախտումները, խախտումների նկարագրությունը, և այն իրավական նորմերը, որոնց պահանջները չեն կատարվել կա, պահպանվել.

10) պատասխանատվության կիրառման համապատասխան իրավական հիմքերը.

11) դիտարկվող սուբյեկտի ներկայացրած առարկությունների վերաբերյալ նշումները:

12. Դիտարկման ընթացքում անձի ֆունկցիոնալության գնահատման օրենսդրությամբ սահմանված պահանջների խախտում հայտնաբերելու դեպքում տեսչական մարմնի ղեկավարը կամ նրա հանձնարարությամբ՝ դիտարկում իրականացնող պաշտոնատար անձը՝ ելնելով խախտման բնույթից.

1) միջնորդագիր է ներկայացնում լիազոր մարմին և անձի ֆունկցիոնալության գնահատման ոլորտում իրավասու պետական մարմին անձի ֆունկցիոնալության գնահատման վերաբերյալ վարչական ակտը վերանայելու վերաբերյալ.

2) միջնորդագիր է ներկայացնում լիազոր մարմին անձի ֆունկցիոնալության գնահատման գործընթացում ներգրավված մասնագետին հավաստագրից զրկելու վերաբերյալ, եթե մասնագետը ֆունկցիոնալության գնահատման առնվազն երեք վարույթով թույլ է տվել խախտում.

3) միջնորդագիր է ներկայացնում առողջապահության բնագավառի պետական կառավարման լիազոր մարմին՝ անձին ֆունկցիոնալության գնահատման ուղեգրում իրականացրած բուժաշխատողի անհատական ~~լիցենզիայից զրկելու~~ լիցենզիայի գործողությունը ~~դադարեցնելու~~ կասեցնելու վերաբերյալ՝ եթե բուժաշխատողը մեկ տարվա ընթացքում ուղեգրման առնվազն երեք դեպքով թույլ է տվել խախտում:

13. Սույն հոդվածի 12-րդ մասի 1-ին կետով սահմանված միջնորդագիրը հիմք է ֆունկցիոնալության գնահատման վերաբերյալ որոշման իրավաչափությունը գնահատելու և վարչական վարութ հարուցելու համար, որի արդյունքով անձի ֆունկցիոնալության գնահատման ոլորտում իրավասու մարմինը կարող է ընդունել վարչական ակտն անփոփոխ թողնելու, փոփոխելու կամ անվավեր ճանաչելու վերաբերյալ որոշում:

14. Սույն հոդվածի 13-րդ մասով սահմանված, ինչպես նաև դիտարկման վարույթի նկատմամբ կիրառվում են վարչական վարույթի վերաբերյալ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքով սահմանված դրույթները՝ սույն հոդվածով սահմանված առանձնահատկությունների հաշվառմամբ:

15. Սույն հոդվածի 12-րդ մասի 2-րդ կետով սահմանված միջնորդագրի հիման վրա լիազոր մարմինն ընդունում է անձի ֆունկցիոնալության գնահատման գործընթացում ներգրավված մասնագետին հավաստագրից զրկելու մասին որոշում:

16. Սույն հոդվածի 12-րդ մասի 3-րդ կետով սահմանված միջնորդագրի հիման վրա Հայաստանի Հանրապետության առողջապահության բնագավառի պետական կառավարման լիազոր մարմինը կարող է ~~դադարեցնել~~ երեք ամիս ժամկետով կասեցնել բուժաշխատողի անհատական լիցենզիայի գործողությունը:

1~~6~~7. Անձի ֆունկցիոնալության գնահատման գործընթացում ներգրավված մասնագետին հավաստագրից զրկելու մասին որոշումն ուժի մեջ մտնելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում, անձին անձի ֆունկցիոնալություն գնահատող մասնագետի որակավորման հավաստագիր չի կարող տրամադրվել:

1~~7~~8. Լիազոր մարմինը, անձի ֆունկցիոնալության գնահատման ոլորտում իրավասու պետական մարմինը և առողջապահության բնագավառի պետական կառավարման լիազոր մարմինը սույն հոդվածի 12-րդ մասով նշված միջնորդագրի քննության արդյունքների վերաբերյալ տեղեկությունները պատշաճ ձևով ծանուցում է տեսչական մարմնին՝ համապատասխան վարչական վարույթի ավարտից հետո՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

1~~8~~9. Դիտարկման ընթացքում անձի ֆունկցիոնալության գնահատման օրենսդրությամբ սահմանված պահանջների խախտումների համար կիրառվում են օրենքով սահմանված պատասխանատվության միջոցներ:

~~19~~20. Սույն հոդվածի 6-րդ մասի 1-ին կետով նախատեսված հիմքով իրականացրած դիտարկման վարույթի ավարտից հետո՝ տեսչական մարմինը 3-օրյա ժամկետում հաղորդում ներկայացրած պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններին պատշաճ ձևով ~~ծանուցվում~~ ծանուցում է միայն դիտարկման արդյունքների վերաբերյալ՝ բացառելով բժշկական գաղտնիք կամ անձնական տվյալ համարվող տեղեկությունների տրամադրումը:»:

Հոդված 8. Օրենքի 12-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 13-րդ մասով.

13. Տեսչական մարմնին տրվում է հասանելիություն տեղեկատվական շտեմարանին այն ծավալով, որն անհրաժեշտ է սույն օրենքով սահմանված վերահսկողական գործառույթներն իրականացնելու համար:»

Հոդված 9.

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված կարգավորումների:

2. Սույն օրենքից բխող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերն ընդունվում են սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ վեցամսյա ժամկետում:

3. Սույն օրենքի 7-րդ հոդվածով լրացվող Օրենքի 11.1-ին հոդվածի 12-րդ մասի 3-րդ կետն անհատական լիցենզիայի մասով՝ 2027 թվականի հունվարի 1-ից:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ
ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ԱՆՁԻ ՖՈՒՆԿՑԻՈՆԱԼՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՒ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Կ-965-20.11.2024-ԱՌՀ-011/0) ԵՒ «ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Կ-965[1]-20.11.2024-ԱՌՀ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	***ՀՀ կառավարություն***	**«Անձի ֆունկցիոնալության գնահատման մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի 2-րդ հոդվածի 2-րդ մաս**	Նախագծի 2-րդ հոդվածի 2-րդ մասով նոր լրացվող 10-րդ կետում «լիազոր մարմնի» բառերը փոխարինել «անձի ֆունկցիոնալության գնահատման ոլորտում Կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի Միասնական սոցիալական ծառայության (այսուհետ՝)» բառերով: Այս փոփոխությունը կատարվել է հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի» մասին օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջը, առ այն որ նորմատիվ իրավական ակտում միևնույն միտքն արտահայտելիս կիրառվում են միևնույն բառերը, տերմինները կամ բառակապակցությունները՝ <u>որոշակի հերթականությամբ</u>: Իսկ Նախագծով կատարվող փոփոխությունների արդյունքում «Միասնական	Ընդունվել է	Ընդունվել է

			սոցիալական ծառայություն» ձևակերպմանն առաջին անգամ հղում է կատարվում այս դրույթում, իսկ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասում օգտագործվում է «ֆունկցիոնալության գնահատման ոլորտում Կառավարության լիազորած պետական կառավարման մարմին» ձևակերպումը:		
2.	***ՀՀ կառավարություն***	**Անձի ֆունկցիոնալության գնահատման մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի 4-րդ հոդված**	Նախագծի 4-րդ հոդվածը շարադրել հետևյալ բովանդակությամբ. «2) լիազոր մարմնի և անձի ֆունկցիոնալության գնահատման ոլորտում իրավասու պետական մարմնի նախաձեռնության, այդ թվում՝ տեսչական մարմնի կողմից ներկայացված միջնորդագրի հիման վրա (վարչական ակտի իրավաչափությունը գնահատելու համար).»: Այս փոփոխությունը պայմանավարված է այն հանգամանքով, որ վերը կատարված փոփոխությամբ Օրենքում այդուհետ օգտագործվելու է «անձի ֆունկցիոնալության գնահատման ոլորտում իրավասու պետական մարմին» ձևակերպումը:	Ընդունվել է	Ընդունվել է
3.	***ՀՀ կառավարություն***	**Անձի ֆունկցիոնալության գնահատման մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին»**	Հանել «դիմումը մուտքագրվում է էլեկտրոնային համակարգ անձի կամ նրա օրինական ներկայացուցչի կողմից, իսկ» բառերը: Գործող կարգավորումներով նախատեսվում է դիմումի ներկայացումը ինչպես առցանց,	Ընդունվել է	Ընդունվել է

		օրենքի նախագծի 5-րդ հոդված, 5.2-րդ մաս	այնպես էլ առձեռն՝ ծառայության ցանկացած տարածքային կենտրոն ներկայացնելով: Այս առումով անհրաժեշտ է վերանայել կարգավորումը՝ անձանց համար լրացուցիչ անհարմարություն չառաջացնելու նպատակով:		
4.	***ՀՀ կառավարություն***	**«Անձի ֆունկցիոնալության գնահատման մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի 7-րդ հոդվածի 12-րդ մաս**	Նախագծի 7-րդ հոդվածի 12-րդ մասի՝ 1) 2-րդ կետում «վերաբերյալ» բառից հետո լրացնել «, եթե մասնագետը ֆունկցիոնալության գնահատման առնվազն երեք վարույթով թույլ է տվել խախտում» բառերը: Առաջարկությունը նպատակ ունի հստակեցնել այն դեպքերը, երբ է Տեսչական մարմինը միջնորդագիր ներկայացնելու ֆունկցիոնալության գնահատման մասնագետին հավաստագրից զրկելու վերաբերյալ: 2) 3-րդ կետում «լիցենզիայից զրկելու» բառերը փոխարինել «լիցենզիայի գործողությունը դադարեցնելու» բառերով: Փոփոխությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» օրենքում օգտագործվում է այս ձևակերպումը (35.3-րդ հոդված):	Ընդունվել է	Ընդունվել է
5.	***ՀՀ կառավարություն***	**«Անձի ֆունկցիոնալության գնահատման մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ**	Նախագծի 7-րդ հոդվածում՝ 1) 15-րդ մասից հետո լրացնել 16-րդ մասը՝ հետևյալ բովանդակությամբ. «16. Սույն հոդվածի 12-րդ մասի 3-րդ կետով սահմանված միջնորդագրի	Ընդունվել է	Ընդունվել է

		կատարելու մասին» օրենքի նախագծի 7-րդ հոդվածի 16-րդ մաս	հիման վրա Հայաստանի Հանրապետության առողջապահության բնագավառի պետական կառավարման լիազոր մարմինը կարող է դադարեցնել բուժաշխատողի անհատական լիցենզիայի գործողությունը:»: Առաջարկության նպատակն է հստակ սահմանել Տեսչական մարմնի միջնորդագրի հիման վրա լիազոր մարմնի կողմից բուժաշխատողի անհատական լիցենզիայի գործողությունը դադարեցնելու լիազորությունը:		
6.	***ՀՀ կառավարություն***	**«Անձի ֆունկցիոնալության գնահատման մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի 7-րդ հոդված**	Ուղղել համարակալումը: Առաջարկը բխում է սույն ամփոփաթերթի 4-րդ կետով սահմանված կարգավորումից:	Ընդունվել է	Ընդունվել է
7.	***ՀՀ կառավարություն***	**«Անձի ֆունկցիոնալության գնահատման մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի 7-րդ հոդվածի 20-րդ մաս**	Նախագծի 7-րդ հոդվածի 20-րդ մասում «ծանուցվում» բառը փոխարինել «ծանուցում» բառով:	Ընդունվել է	Ընդունվել է
8.	***Պատգամավոր Լուսինե Բաղալյան***	**«Անձի ֆունկցիոնալության գնահատման մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ**	Նախագծի 3-րդ հոդվածով՝ գործող օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասում 4.1 կետով լրացվող դրույթը կիրառության իմաստով խնդրահարույց է:	Պարզաբանում. Հարկ է նշել որ «Անձի ֆունկցիոնալության գնահատման մասին» օրենքի 6-րդ հոդվածով սահմանված են անձի	Չի ընդունվել

		կատարելու մասին» օրենքի նախագծի 3-րդ հոդվածի	*4.1) ապահովում է անձի ֆունկցիոնալության գնահատման հանձնաժողովի անդամի վերապատրաստման իրականացումը և հավաստագրի տրամադրումը.*»: Գործող օրենքում ֆունկցիոնալության գնահատումն իրականացվում է ռեեստրում գրանցված հանձնաժողովի անդամների կողմից: Այդ անդամների համար հավաստագրի ստանալու պահանջ առկա չէ: Եթե Նախատեսվում է ունենալ այդպիսի պահանջ, ապա դրա համար պետք է սահմանվի կարգ և այդ կարգը սահմանելու մասին արձանագրում պետք է կատարվի օրենքի նախագծում:	ֆունկցիոնալության գնահատման ոլորտում *Կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի (այսուհետ՝ լիազոր մարմին) լիազորությունները*, որի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ լիազոր մարմինը հաստատում է անձի ֆունկցիոնալության գնահատման գործընթացում ներգրավված մասնագետների վերապատրաստման կարգն ու պայմանները, անձի ֆունկցիոնալության գնահատման գործընթացում ներգրավված մասնագետներին վերապատրաստումից հետո տրվող հավաստագրերի օրինակելի ձևերը: Այսինքն՝ գործող օրենքով արդեն իսկ սահմանված են անձի ֆունկցիոնալության գնահատման գործընթացում ներգրավված մասնագետի վերապատրաստման վերաբերյալ կարգավորումները, իսկ վերապատրաստումը գործնականում իրականացնում է լիազոր մարմինը: Ըստ այդմ, քննարկվող կարգավորման նպատակն է պարզապես Օրենքում հստակ ամրագրել, որ վերապատրաստումն իրականացնում է լիազոր մարմինը:	

				Իսկ ինչ վերաբերում է նրան, որ պետք է սահմանվի կարգ՝ ապա հայտնում եմ, այն արդեն իսկ սահմանված է Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2022 թվականի դեկտեմբերի 30-ի «*Անձի ֆունկցիոնալության գնահատման գործընթացում ներգրավված մասնագետներին վերապատրաստման կարգն ու պայմանները, անձի ֆունկցիոնալության գնահատման գործընթացում ներգրավված մասնագետներին վերապատրաստրաստումից հետո տրվող հավաստագրերի օրինակելի ձևերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2022 թվականի մարտի 30-ի N 47-Ա/1 հրամանում փոփոխություններ կատարելու մասին*» N 176-Ա/1 հրամանով:	
9.	***Պատգամավոր Լուսինե Բաղալյան***	**Անձի ֆունկցիոնալության գնահատման մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի 7-րդ հոդվածի 6-րդ մաս**	Նախագծի տրամաբանությունից հստակ չէ, թե տեսչական մարմինը, որ էտապում կարող է դիտարկումն իրականացնել: Այն էտապում, երբ գնահատված է անձի ֆունկցիոնալությունը, թե այն էտապում, երբ բողոքարկված է անձի ֆունկցիոնալության գնահատումը, կամ երբ առկա է դատական վճիռ	Պարզաբանում. Նախագծի 7-րդ հոդվածով նոր լրացվող օրենքի 11.1-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ դիտարկումները լինում են **դիտարկումների տարեկան ծրագրով նախատեսված և ըստ անհրաժեշտության:**	Չի ընդունվել

			ֆունկցիոնալության գնահատականի վերաբերյալ: Նաև հստակ չէ թե նախագծի 7-րդ հոդվածի 6-րդ մասով նախատեսված հիմքերից բացի դիտարում իրականցնելու այլ ինչ իրավական հիմքեր կան, որոնց մասին խոսվում է նախագծի 7-րդ հոդվածի 7-րդ մասում:	Տարեկան ծրագրով նախատեսված դիտարկումներն իրականացվելու են տեսչական մարմնի ղեկավարի հաստատած դիտարկման տարեկան ծրագրին համապատասխան, որը կազմվելու է Կառավարության որոշմամբ հաստատած մեթոդաբանության հիման վրա և տվյալ դեպքում, ըստ էության, ընդգրկելու է ֆունկցիոնալության ամբողջ գործընթացը: Միաժամանակ, ըստ անհրաժեշտության դիտարկումն իրականացվելու է 7-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված հիմքերի առկայության դեպքում */ պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների հաղորդումները, ֆիզիկական անձի կամ նրա օրինական ներկայացուցչի դիմումը, որի ֆունկցիոնալությունը գնահատվել է, հաշմանդամություն ունեցող անձանց հիմնահարցերով զբաղվող կազմակերպությունների հաղորդումները և այլն/* և ներառելու է միայն հաղորդմամբ կամ բողոքով բարձրաձայնած հարցի շրջանակը: Այսպիսով, Տեսչական մարմնի լիազորությունների տիրույթում են գտնվելու միայն ֆունկցիոնալության գնահատման և բողոքարկման վարույթները, իսկ դատական վճռի փուլը, ըստ	

				էության, դուրս է Տեսչական մարմնի լիազորությունների շրջանակից, և այն հիմք է հանդիսանում միայն Լիազոր մարմնի համար՝ կայացրած որոշումները վերանայելու համար և տվյալ փուլում Տեսչական մարմինը որևէ գործառույթ չի կարող իրականացնել: Իսկ ինչ վերաբերում է այն հարցին, որ *նախագծի 7-րդ հոդվածի 6-րդ մասով նախատեսված հիմքերից բացի դիտարկում իրականացնելու այլ ինչ իրավական հիմքեր կան, որոնց մասին խոսվում է նախագծի 7-րդ հոդվածի 7-րդ մասում,* ապա նախ հարկ է նշել, որ 7-րդ մասով սահմանվում է, որ դիտարկումն իրականացվում է տեսչական մարմնի ղեկավարի հրամանի հիման վրա, որում նշվում են դիտարկում իրականացնող մարմնի անվանումը, դիտարկում իրականացնող անձի պաշտոնը, անունը, «…» և դիտարկման հիմքը, որը կարող է լինել կամ վերը նշված տարեկան ծրագիրը կամ ըստ անհրաժեշտության դիտարկան դեպքերը:	
10.	***Պատգամավոր Լուսինե Բաղալյան***	**«Անձի ֆունկցիոնալության գնահատման մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին»**	Նախագծի 7-րդ հոդվածի 12-րդ մասի 3-րդ կետում առաջարկվում է բուժաշխատողին «զրկել» անհատական լիցենզիայից սխալ ուղեգրման արդյունքում: Բուժաշխատողին անհատական	Ընդունվել է մասնակի. «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» օրենքի 35.3-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով սահմանված է, որ անհատական	Չի ընդունվել

		օրենքի նախագծի 7-րդ հոդվածի 12-րդ մաս	լիցենզիայից «զրկելու» հասկացություն գոյություն չունի: «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» 2024 թվականի մայիսի 3-ին ընդունված ՀՕ-164-Ն օրենքում առկա են ավագ բուժաշխատողի անհատական լիցենզիան «դադարեցնելու» կամ «կասեցնելու» առանձին պայմաններ և հիմքեր: Եթե խոսքը գնում է անհատական լիցենզիան դադարեցնելու կամ կասեցնելու մասին, ապա «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» գործող օրենքում անհրաժեշտ է կատարել համապատասխան փոփոխություն և ավելացնել անհատական լիցենզիան դադարեցնելու կամ կասեցնելու համապատասխան հիմքը:	լիցենզիայի գործողությունը դադարեցվում է՝ օրենքով նախատեսված այլ դեպքերում: Հետևաբար հաշվի առնելով վերոգրյալ կարգավորումը՝ Նախագծի 11.1-ին հոդվածի 16-րդ մասով սահմանված է, որ նույն *հոդվածի 12-րդ մասի 3-րդ կետով սահմանված միջնորդագրի հիման վրա Հայաստանի Հանրապետության առողջապահության բնագավառի պետական կառավարման լիազոր մարմինը կարող է դադարեցնել բուժաշխատողի անհատական լիցենզիայի գործողությունը:*	
11.	***Պատգամավոր Լուսինե Բաղալյան***	**«Անձի ֆունկցիոնալության գնահատման մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի 7-րդ հոդվածի 19-րդ մաս**	Նախագծի 7-րդ հոդվածի 19-րդ մասում «Սույն հոդվածի 6-րդ մասի 1-ին կետով նախատեսված հիմքով իրականացրած դիտարկման վարույթի ավարտից հետո՝ տեսչական մարմինը 3-օրյա ժամկետում հաղորդում ներկայացրած պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններին պատշաճ ձևով ծանուցում է միայն դիտարկման արդյունքների վերաբերյալ» թերի է, քանի որ ըստ	Պարզաբանում. Նախագծի 7-րդ հոդվածով օրենքում նոր լրացվող 11.1 հոդվածի 14-րդ մասով սահմանված է, որ *դիտարկման վարույթի նկատմամբ կիրառվում են «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքով սահմանված դրույթները՝ սույն հոդվածով սահմանված առանձնահատկությունների հաշվառմամբ*: Ըստ վերոգրյալ օրենքի՝ քննարկվող սուբյեկտները վարույթի մասնակիցներ են,	Չի ընդունվել

			անհրաժեշտության դիտարկումների համար նախատեսված է 4-րդ հիմք: Դրանք են՝ 1) պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների հաղորդումները. 2) ֆիզիկական անձի կամ նրա օրինական ներկայացուցչի (օրենսդրությամբ ֆունկցիոնալության գնահատման դիմում ներկայացնելու իրավունքի ունեցող անձի) դիմումը, որի ֆունկցիոնալությունը գնահատվել է. 3) հաշմանդամություն ունեցող անձանց հիմնահարցերով զբաղվող կազմակերպությունների հաղորդումները. 4) Հայաստանի Հանրապետության վարչապետի հանձնարարականը: Հետևաբար, դիտարկումների արդյունքում պետք է պատշաճ ծանուցվեն նաև 2-րդ և 3-րդ կետերի հիմքերով:	որոնց ծանուցման հետ կապված հարցերն արդեն իսկ կարգավորված են, ուստի Նախագծով դրանք նորից չեն սահմանվել:	
12.	***Պատգամավոր Լուսինե Բաղալյան***	**«Անձի ֆունկցիոնալության գնահատման մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագիծ**	Առաջարկում եմ նախագծի տեղեկանքներում արձանագրել, որ նախագծերի ընդունման արդյունքում հարկավոր է լրացումներ կատարել նաև «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» գործող օրենքում, Տեսչական մարմնի կանոնադրությունում/ ՀՀ վարչապետի թիվ 755-Լ որոշման մեջ/ և ՀՀ կառավարության 2022 թվականի հուլիսի 28-թիվ 1180 որոշման մեջ:	Պարզաբանում. Նախագծի 9-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված է, որ սույն օրենքից բխող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերն ընդունվում են սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ վեցամսյա ժամկետում: Բացի այդ ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի «Կառավարության աշխատակարգը հաստատելու	Չի ընդունվել

				մասին» N 252-Լ որոշման 106-րդ կետի համաձայն՝ ՀՀ օրենքը հրապարակվելուց հետո 20-օրյա ժամկետում պետական կառավարման համակարգի մարմինը, որի ներկայացուցիչն Ազգային ժողովում օրենքի նախագծի քննարկման ժամանակ հանդես է եկել որպես Կառավարության պաշտոնական ներկայացուցիչ (հարակից զեկուցող) վարչապետի աշխատակազմ է ներկայացնում օրենքի կիրարկումն ապահովող միջոցառումների մասին վարչապետի որոշման նախագիծ կամ նման նախագիծ ներկայացնելու անհրաժեշտության բացակայության մասին հիմնավորում: Ինչ վերաբերում է «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» գործող օրենքում փոփոխություն կատարելու անհրաժեշտությանը, ապա այն բացակայում է՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ համապատասխան իրավական հիմքերը արդեն իսկ նախատեսվում են «Անձի ֆունկցիոնալության գնահատման մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծով՝ հիմք	

				ընդունելով «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» օրենքի 35.3-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետը, որի համաձայն բուժաշխատողի անհատական լիցենզիայի գործողությունը դադարեցվում է՝ օրենքով նախատեսված **այլ դեպքերում:**	
13.	***Պատգամավոր Արմենուհի Կյուրեղյան***	**Անձի ֆունկցիոնալության գնահատման մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագիծ 7-րդ հոդվածի**	1. Հոդված 7. Օրենքի 2-րդ գլուխը լրացնող 11.1-րդ հոդվածի 12-րդ մասի 3-րդ կետը՝ «միջնորդագիր է ներկայացնում առողջապահության բնագավառի պետական կառավարման լիազոր մարմին՝ անձին ֆունկցիոնալության գնահատման ուղեգրում իրականացրած բուժաշխատողին անհատական լիցենզիայի գործողությունը դադարեցնելու վերաբերյալ՝ եթե բուժաշխատողը մեկ տարվա ընթացքում ուղեգրման առնվազն երեք դեպքով թույլ է տվել խախտում:» հանել: 2. Հոդվածի 7. Օրենքի 2-րդ գլուխը լրացնող 11.1-րդ հոդվածի 12-րդ մասի 2-րդ կետում «.»-ը փոխարինել «:»-ով Հիմնավորում «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» օրենքի 35.1-րդ հոդվածի 10-րդ մասով սահմանված է, որ լիցենզավորող հանձնաժողովը կարող է քննել բուժաշխատողի գործունեության որակի վերաբերյալ բողոքները:	Պարզաբանում. «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» օրենքի 35.3-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով սահմանված է, որ բուժաշխատողի անհատական լիցենզիայի գործողությունը դադարեցվում է՝ օրենքով նախատեսված այլ դեպքերում: Հետևաբար հաշվի առնելով վերոգրյալ կարգավորումը՝ Նախագծի 7-րդ հոդվածով լրացվող՝ 11.1-ին հոդվածի 16-րդ մասով սահմանված է, որ նույն հոդվածի 12-րդ մասի 3-րդ կետով սահմանված միջնորդագրի հիման վրա Հայաստանի Հանրապետության առողջապահության բնագավառի պետական կառավարման լիազոր մարմինը կարող է դադարեցնել բուժաշխատողի անհատական լիցենզիայի գործողությունը: Մեր գնահատմամբ բուժաշխատողի կողմից մեկ	Չի ընդունվել

			Նույն հոդվածի 11-րդ մասող սահմանված է, որ լիցենզավորող հանձնաժողովը կարող է 1 կամ 3 ամսով կասեցնել անհատական լիցենզիայի գործողությունը: Նույն Օրենքի 35.2 և 35.3 հոդվածներով նախատեսված են լիցենզիայի կասեցման և դադարեցման կարգն ու հիմքերը, որոնք որևէ կերպ չեն առնչվում անձի ֆունկցիոնալության գնահատման կամ ուղեգիր տրամադրելու հետ: Պետք է արձանագրել այն փաստը, որ նախագծով տեսչական մարմնին իրավունք է տրվում օրենսդրությամբ սահմանված ուղեգրման ներկայացնելու կարգը 1-ին անգամ խախտելու դեպքում անձի ֆունկցիոնալության գնահատման ուղեգրում իրականացնող բուժաշխատողին տուգանքի նշանակել սահմանված նվազագույն աշխատավարձի յոթանասունապատիկից հարյուրապատիկի չափով՝ ուղեգրման յուրաքանչյուր դեպքի համար, 2-րդ անգամ՝ այդ բուժաշխատողին տուգանք նշանակել՝ նախորդ դեպքի համար նշանակված տուգանքի կրկնապատիկի չափով, 3-րդ անգամ միջնորդագիր է ներկայացնել լիազոր մարմնին՝ անձին ֆունկցիոնալության գնահատման ուղեգրում	տարվա ընթացքում երեք անգամ օրենսդրության խախտում թույլ տալը լիցենզիայի գործողությունը դադարեցնելու հիմք նախատեսելը համաչափ է:	

			իրականացրած բուժաշխատողին անհատական լիցենզիայից զրկելու վերաբերյալ՝ եթե բուժաշխատողը մեկ տարվա ընթացքում ուղեգրման առնվազն երեք դեպքով թույլ է տվել խախտում: Վերոնշյալ դրույթը կարող է հակասական լինել մասնավորապես երկու հիմքով. Բուժաշխատողը ուղեգրելուց կարող է ողջամիտ համոզմունք ունենալ, որ տվյալ անձը հավակնում է ֆունկցիոնալության խանգարման որոշակի աստիճանի, ինչը կպարզվի միայն անհրաժեշտ քննության շրջանակներում: Սահմանադրությամբ սահմանված է, որ պատիժը պետք է համաչափ լինի կատարված իրավախախտմանը և արդարացնի այն նպատակը, որին ցանկացել է հասնել օրենսդիրը: Տվյալ դեպքում օրենսդիրը նպատակը ոչ թե բժշկին անհատական լիցենզիայից զրկելը պետք է լինի, այլ ուղեգրման չարաշահումները կանխելը: Արդյոք այս պատժաչափը համաչափ է կատարված արարքին, հատկապես եթե հաշվի առնենք, որ առողջապահության բնագավառում մասնագիտական ինքնուրույն գործունեության իրականացնելու համար անհրաժեշտ փաստաթուղթ է:		

			Ստացվում է, որ ուղեգրման սխալի համար բուժաշխատողը կարող է զրկվել իր իրավունքից՝ ողջամտորեն իրականացնել իր մասնագիտական գործունեությունը, ինչը բացահայտ ոչ իրավաչափ պատժատեսակ է:		
14	***Պատգամավոր Արմենուհի Կյուրեղյան***	**Անձի ֆունկցիոնալության գնահատման մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագիծ 7-րդ հոդվածի**	Հոդված 7. Օրենքի 2-րդ գլուխը լրացնող 11.1-րդ հոդվածի 12-րդ մասի 3-րդ կետը՝ «դադարեցնելու» բառը փոխարինել «կասեցնելու» բառով:	Ընդունվել է	Ընդունվել է
15	***Պատգամավոր Արմենուհի Կյուրեղյան***	**Անձի ֆունկցիոնալության գնահատման մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագիծ 7-րդ հոդվածի**	Հոդված 7. Օրենքի 2-րդ գլուխը լրացնող 11.1-րդ հոդվածի 16-րդ մասի «դադարեցնել» բառը փախարինել «3 ամիս ժամկետով կասեցնել» բառերով:	Ընդունվել է	Ընդունվել է